ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում իրականացված քննարկման արդյունքում արձանագրվել են ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի իրացման հետ կապված խնդիրներ: Նշված խնդիրներին մանրակրկիտ անդրադարձ է կատարվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2016 և 2017 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցներում:

Ուսումնասիրությունների և իրավական վերլուծությունների հիման վրա մշակվել է նախագծերի փաթեթ, որը համատեղ քննարկվել է ՀՀ արդարադատության նախարարության հետ: Պաշտպանը կարևորում է համատեղ աշխատանքի այս փորձը:

Սույն իրավական վերլուծությամբ ուսումնասիրության շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ձևավորվել են իրավական դիրքորոշումներ, որոնք վերաբերում են՝

ա) մերձավոր ազգականների հետ կապն ապահովելու համար դատապարտյալին քրեակատարողական մեկ հիմնարկից նույն տեսակի մեկ այլ հիմնարկ տեղափոխելու հնարավորության բացակայությունը,

բ) կալանավորված անձանց և դատապարտյալներին անձնական բացառիկ հանգամանքների կապակցությամբ կարճաժամկետ մեկնումների տրամադրումը բացառող հանգամանքների իրավաչափությունը,

գ) օրենսդրությամբ կալանավորված անձանց երկարատև տեսակցություններ տրամադրելու հնարավորության բացակայությանը,

դ) անձի կարգավիճակով պայմանավորված՝ նույնականացման քարտ չտրամադրելու իրավաչափությունը,

ե) ստացիոնար բուժման մեջ գտնվելու ընթացքում անձի նկատմամբ կիրառված կարգապահական տույժի հետաձգման հնարավորության բացակայությունը,

զ) ցմահ ազատազրկված անձանց անջատ պահելու կանոնի վերանայման անհրաժեշտությունը:

Այսպես, քննարկվել են ազատությունից զրկված անձանց կարճատև և երկարատև տեսակցությունների, ինչպես նաև կարճատև մեկնումների տրամադրման հետ կապված խնդիրները, որոնք պայմանավորված են եղել օրենսդրական կարգավորումներում անձի անհատական ռիսկայնությունը հաշվի չառնելու և կարճատև մեկնումը կամ երկարատև տեսակցությունը միայն անձի կատարած հանցագործության ծանրության աստիճանի հետ կապելու հանգամանքներով: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ բնակության վայրից հեռու գտնվող քրեակատարողական հիմնարկում տեղաբաշխվելու արդյունքում ազատությունից զրկված անձինք զրկված են եղել ընտանիքի անդամների և ազգականների հետ հաղորդակցվելու հնարավորությունից: Նշվածը պատճառաբանվել է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 69-րդ հոդվածում նման հիմքի բացակայությամբ:

Միաժամանակ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բողոքներ ազատությունից զրկված անձանց անձնագրերով (նույնականացման քարտերով) փաստաթղթավորման գործընթացի վերաբերյալ: Բողոքներում բարձրացված խնդիրներին մանրակրկիտ անդրադարձ է կատարվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2016 և 2017 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցում:

Մասնավորապես, ազատությունից զրկված տարբեր անձինք նշել են, որ ՀՀ քաղաքացու նույնականացման քարտ ստանալու խնդրանքով դիմել են քրեակատարողական հիմնարկի վարչակազմին, սակայն նրանց կողմից միջոցներ չեն ձեռնարկվել իրեն նույնականացման քարտ կամ ժամանակավոր վկայական տրամադրելու ուղղությամբ այն հիմնավորմամբ, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պարտավոր է միջոցներ ձեռնարկել միայն դատապարտյալի կարգավիճակ ունեցող անձին նույնականացման քարտ տրամադրելու ուղղությամբ, իսկ տվյալ

դեպքերում անձն ունեցել է կալանավորված անձի և ոչ թե դատապարտյալի կարգավիճակ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում են գտնվում նաև ազատությունից զրկված այն անձանց առողջության պահպանման իրավունքի երաշխավորումը, որոնց նկատմամբ կիրառվել է պատժախուց տեղափոխելու ձևով կարգապահական տույժ: Նշված իրավունքի ապահովումն առավել առաջնային է այն պարագայում, երբ ազատությունից զրկված անձը քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի ստացիոնարում կամ բուժական ուղղիչ հիմնարկում գտնվում է ստացիոնար բուժման մեջ: Այս առումով ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը հնարավորություն չի տալիս մինչև ստացիոնար բուժման ավարտը հետաձգել կարգապահական տույժի կիրառումը:

Ավելի մանրամասն անդրադառնալով նշված խնդիրներին՝ հարկ է նշել հետևյալը.

ա) Ազատությունից որևէ կերպ զրկված անձի մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունքը՝ որպես անձի արժանապատվության և ֆիզիկական անձեռնմխելիության երաշխավորման պայման, ենթադրում է պետության պարտականությունը՝ ձեռնարկել այնպիսի անհրաժեշտ միջոցներ, որոնք ուղղված են ազատությունից զրկված անձի նշված իրավունքի իրացմանը:

Մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունքի հարգումը պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման էական երաշխիք է: Ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ են պատժի կրման այնպիսի պայմաններ, որոնք բավարար կլինեն, որպեսզի պատժի կրման ընթացքում դատապարտյալը չկորցնի հասարակությունում նախկինում ձեռք բերած վարքի կանոնները և հմտությունները: Այն պետք է նպաստի դատապարտյալների կենցաղի և աշխատանքի հարցերի կարգավորմանը, ընտանեկան և սոցիալական կապերի ամրապնդմանը:

Մերձավոր ազգականներ հետ կապը չափազանց կարևոր նշանակություն ունի նաև դատապարտյալին ազատ արձակելուն նախապատրաստելու տեսանկյունից: Մասնավորապես, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման

գործընթացի բարեփոխմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների համաձայն՝ դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու վտանգը գնահատելիս հաշվի է առնվում նաև ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապը (ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.2-րդ մասի 9-րդ կետ): Առաջարկվող փոփոխություններն ուղղված են նշված կապի ապահովմանը, որը կխթանի նաև անձի օրինապահ վարքագիծը:

Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ *դատապարտյալն ունի արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունք, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ, օգտվելու հեռախոսակապից, գրականությունից և հնարավոր լրատվական միջոցներից*:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *ուղղիչ հիմնարկի վարչակազմը ստեղծում է համապատասխան պայմաններ՝ ընտանիքի և արտաքին աշխարհի հետ դատապարտյալի կապն ապահովելու նպատակով*: Այդ նպատակով ուղղիչ հիմնարկում ստեղծվում են կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ:

Մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունքն իր ամրագրումն է ստացել նաև միջազգային մի շարք իրավական փաստաթղթերում: Այսպես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի (…) նկատմամբ հարգանքի իրավունք*:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից թիվ (2006)2 հանձնարարականով ընդունված «Եվրոպական բանտային կանոնների» (այսուհետ՝ Եվրոպական բանտային կանոններ) 24.1-րդ կանոնի համաձայն՝ *ազատությունից զրկված անձանց պետք է թույլատրվի հնարավորին չափ հաճախ նամակով, հեռախոսով կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել կամ տեսակցել իրենց ընտանիքի անդամների, այլ անձանց և կազմակերպությունների հետ*:

Ազատությունից զրկված անձի՝ տեսակցություններ ունենալու իրավունքի տեսանկյունից չափազանց կարևոր է նաև, որ նրանք տեղաբաշխվեն իրենց մերձավոր ազգականներին հնարավորինս մոտ գտնվող քրեակատարողական հիմնարկներում:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Եվրոպական բանտային կանոնների 17.1-րդ կանոնի համաձայն՝ *ազատությունից զրկված անձինք պետք է հնարավորության սահմաններում տեղաբաշխվեն իրենց բնակության վայրին (...) մոտ գտնվող ազատազրկման վայր*:

Վերոնշյալ չափորոշիչներն իրենց ամրագրումն են գտել նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում, համաձայն որի՝ *ուղղիչ հիմնարկներում սահմանված կանոնակարգի նպատակն է ապահովել կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ*:

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ *ազատազրկման մեջ գտնվող անձանց հեռավոր ազատությունից զրկման վայրում պահելը հանդիսանում է միջամտություն Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորվող իրավունքների իրացմանը*: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այսպիսի դիրքորոշում արտահայտելիս, մասնավորապես, հաշվի է առել ազատությունից զրկման համապատասխան վայրերի երկար հեռավորությունն ազատազրկված անձանց մերձավոր ազգականների բնակության վայրից, աշխարհագրական տեղադրությունը, տրանսպորտային համակարգի վիճակը և այլն (*տե՛ս Խոդորկովսկին և Լեբեդևն ընդդեմ Ռուսաստանի վճիռը, գանգատներ թիվ 11082/06 և 13772/05, կետ 838, տե՛ս նաև Վինթմանն ընդդեմ Ուկրաինայի վճիռը, գանգատ թիվ 28403/05, կետ 79*): Այսպիսով, ազատությունից զրկված անձանց ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի անքակտելի մաս է բանտային իշխանությունների կողմից նրանց տրամադրվող օգնությունը՝ մերձավոր ազգականների հետ շփումները պահպանելու հարցում (*տե՛ս Մեսսինան ընդդեմ Իտալիայի (թիվ 2) վճիռը, գանգատ թիվ 25498/94*):

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (այսուհետ՝ ԽԿԿ)

իրավաբանության համաձայն՝ ազատությունից զրկված անձանց համար շատ կարևոր է բավարար շփումն արտաքին աշխարհի հետ: *Առաջին հերթին կալանավորված անձը պետք է հնարավորություն ստանա պահպանելու հարաբերություններն իր ընտանիքի և մտերիմ բարեկամների հետ* (*տե՛ս 1991 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ԽՍԿԿ-ի գործունեության մասին 2-րդ ընդհանուր հաշվետվությունը, կետ 51*):

բ) Անդրադառնալով ազատությունից զրկված անձանց կարճաժամկետ մեկնում տրամադրելու հարցին՝ հարկ է նշել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *դատապարտյալին, <u>բացառությամբ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքի</u>, կարող է տրամադրվել կարճաժամկետ մեկնում անձնական բացառիկ հանգամանքների (մերձավոր ազգականի մահ կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդություն, տարերային աղետ, որը զգալի նյութական վնաս է պատճառել դատապարտյալին կամ նրա ընտանիքին) դեպքում, ինչպես նաև սոցիալական վերականգնման նպատակով*:

Համանման կարգավորում է պարունակում նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ պարբերությունը՝ սահմանելով, որ *կալանավորված անձանց, <u>բացառությամբ առանձնապես ծանր հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձանց</u>, մերձավոր ազգականի մահվան կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդության, կալանավորված անձին կամ նրա ընտանիքին զգալի նյութական վնաս պատճառած տարերային աղետի դեպքում կարող են տրամադրվել կարճաժամկետ մեկնումներ*:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ԽՍԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում կրկին ընդգծել է, որ *հիմնավորապես սխալ է այն համակարգը, որի համաձայն արտաքին աշխարհի հետ ազատությունից զրկված անձանց կապի սահմանները որոշվում են որպես նշանակված պատժի մի մաս (և ըստ այն ռեժիմի, որով նա կրում է իր պատիժը)* (*տե՛ս ԽՍԿԿ-ի կողմից 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ն*

ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետություն կատարած այցի արդյունքների հիման վրա կազմված զեկույցը, կետ 107):

գ) Չափազանց խնդրահարույց է նաև կալանավորված անձանց երկարատև տեսակցություններ տրամադրելու օրենսդրական հնարավորության բացակայությունն այն պայմաններում, երբ կալանքը որպես խափանման միջոց անձի նկատմամբ կարող է կիրառվել տարիներ շարունակ, ինչպիսի պարագայում անձը, ում նկատմամբ գործում է անմեղության կանխավարկածը, զրկվում է իր մերձավոր ազգականների հետ երկարատև տեսակցություն ունենալու հնարավորությունից: Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքները փաստում են նաև, որ առկա են դեպքեր, երբ օտարերկրյա քաղաքացիները, կալանավորված լինելով և պահվելով ՀՀ քրեակատարողական հիմնարկներում, զրկվում եմ արտերկրում գտնվող իրենց ընտանիքի անդամների հետ տեսակցելու հնարավորությունից, քանզի միայն կարճատև տեսակցության նպատակով Հայաստանի Հանրապետություն գալը նման անձանց մերձավոր ազգականների համար առաջացնում է բազմաթիվ չարդարացված դժվարություններ: Միաժամանակ, արդարացված չէ երկարատև տեսակցություններ տրամադրելու հարցում կալանավորված անձանց և դատապարտյալների միջև նման տարբերակված մոտեցումը՝ առանց անձի վարքագծով, ռիսկայնությամբ և այլ օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված հիմնավոր պատճառաբանության:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Վարնասն ընդդեմ Լիտվայի գործով արձանագրվել է Թոմաս Վարնասի՝ իր անձնական և ընտանեկան կյանքի հանդեպ հարգանքի իրավունքից օգտվելու հարցում խտրականության չենթարկվելու իրավունքի խախտում (*տե՛ս նշված գործով 2013 թ-ի հուլիսի 9-ի վճիռ, գանգատ թիվ 42615/06, կետ 104*): Տվյալ գործով լիտվական իշխանությունները պարոն Վարնասին, երբ նա գտնվում էր մեկուսարանում, չէին թույլատրել իր կնոջ հետ երկարատև տեսակցություններ ունենալ, չնայած, որ այդպիսի հանդիպումները նրան թույլատրվել էին քրեակատարողական հիմնարկում, որտեղ պատիժ էր կրում քննչական մեկուսարան տեղափոխվելուց անմիջապես առաջ:

Միաժամանակ, Թոմաս Վարնասի՝ իր կնոջ հետ հանդիպումների սահմանափակումը ոչ մի կապ չի ունեցել անվտանգության ապահովման խնդրի հետ, և տեսակցության տարբերակված պայմանների նախատեսումը որևէ օբյեկտիվ արդարացում չի ունեցել: Կնոջ հետ առանձին երկարատև տեսակցություն ունենալու միջնորդության մերժումը տեղական իշխանությունները հիմնավորել են ոչ միայն նախաքննության շահերի պաշտպանության վերաբերյալ տեսական դատողություններով, այլ նաև քննչական մեկուսարանում նման բնույթի հանդիպումների համար անհրաժեշտ պայմանների բացակայությամբ, ինչը Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդունելի արդարացում չի համարել (*տե՛ս կետ 121*):

դ) «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքով սահմանվում է դատապարտյալին նույնականացման քարտի կամ ժամանակավոր վկայականի տրամադրման գործընթացը, սակայն կալանավորված անձանց վերաբերյալ որևէ կարգավորում նախատեսված չէ:

«Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«(...) Ժամանակավոր վկայական կարող է տրվել նաև ազատազրկման դատապարտված քաղաքացուն քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջոցով, իսկ կարճաժամկետ մեկնում ստացած դատապարտյալին՝ ընդհանուր հիմունքներով (...):»:*

Նշված իրավակարգավորմամբ սահմանվում է ինչպես դատապարտյալի ժամանակավոր վկայական ստանալու իրավունքը, այնպես էլ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից այդ գործընթացը կազմակերպելու պարտականությունը: Իրավական որոշակիությունն ապահովելու նպատակով և ելնելով այն հանգամանքից, որ քննարկվող ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտը ՀՀ քրեակատարողական օրենսգիրքն է՝ անհրաժեշտություն է առաջանում դատապարտյալի վերը նշված իրավունքի վերաբերյալ դրույթ ամրագրել նաև օրենսգրքի՝ նրա իրավունքները սահմանող համապատասխան հոդվածում՝ հղում կատարելով «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին:

Քրեակատարողական օրենսգրքում համապատասխան լրացում կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև գործնականում օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով ամրագրված՝ դատապարտյալի՝ քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու իրավունքի պատշաճ իրականացմամբ, քանի որ նման գործարքներ կնքելու դեպքում անհրաժեշտություն է առաջանում ունենալ անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, նույնականացման քարտ, ժամանակավոր վկայական և այլն):

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ *ձերբակալված կամ կալանավորված անձը նույնպես իրավունք ունի մասնակցել քաղաքացիաիրավական գործարքներին:*

Կալանավորված անձանց դեպքում նույնպես քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու ընթացքում անհրաժեշտություն է առաջանում ունենալ անձը հաստատող փաստաթուղթ և գործնականում կարող են լինել դեպքեր, երբ քաղաքացին, չունենալով նման փաստաթուղթ, ցանկանում է դիմել իրավասու պետական մարմնին՝ այն ստանալու և վերը նշված գործարքներին մասնակցելու նպատակով:

«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը ժամանակավոր վկայական ստանալու իրավունք է նախատեսում ազատազրկման դատապարտված քաղաքացիների համար՝ նման իրավունք չնախատեսելով կալանավորված անձանց համար: Այսպես, գործնականում կարող են լինել դեպքեր, երբ այն կալանավորված անձը, ով չունի անձը հաստատող փաստաթուղթ, դրա վավերականության ժամկետը լրանալու, այն կորցնելու կամ այլ պատճառով, զրկվում է իր՝ քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու իրավունքից:

«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *եթե օրենքով սահմանված հիմքերով քրեակատարողական հիմնարկի վարչակազմն ազատազրկման դատապարտված քաղաքացուց վերցրել է ժամանակավոր վկայականը կամ նույնականացման քարտը, ապա, դատապարտյալի կողմից քաղաքացիաիրավական գործարքներ կնքելու խնդրանքով պայմանավորված,*

պարտավոր է ժամանակավոր վկայականը կամ նույնականացման քարտը տրամադրել դատապարտյալին:

Նշված կարգավորումից հետևում է, որ քրեակատարողական հիմնարկում դատապարտյալի կողմից քաղաքացիաիրավական գործարքներ կնքելու դեպքում, վերջինս իրավունք ունի քրեակատարողական հիմնարկի վարչակազմից խնդրել և ստանալ իր ժամանակավոր վկայականը կամ նույնականացման քարտը: Չնայած որ ձերբակալված կամ կալանավորված անձը նույնպես ունի քաղաքացիաիրավական գործարքներ կնքելու իրավունք, համանման իրավակարգավորում նրա վերաբերյալ ամրագրված չէ, ինչը գործնականում կարող է հանգեցնել վերջինիս իրավունքների սահմանափակմանը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջանում «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ազատազրկման դատապարտված անձանց իրավունքները նախատեսել նաև կալանավորված անձանց համար, իսկ նույն հոդվածի 3-րդ մասում՝ ձերբակալված անձի համար:

Բացի այդ, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ *<u>ձերբակալված</u> կամ կալանավորված անձն իրավունք ունի մասնակցել քաղաքացիաիրավական գործարքներին: Նույն օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ <u>ձերբակալված անձանց արգելվում է մասնակցել քաղաքացիաիրավական գործարքներին</u>:* Ակնհայտ է նույն օրենքի տարբեր դրույթների միջև հակասությունը. դրանցից մեկի ուժով ձերբակալված անձն իրավունք ունի մասնակցել քաղաքացիաիրավական գործարքներին, իսկ մյուսով նա այդ իրավունքից զրկված է:

ե) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները վկայում են, որ ազատությունից զրկված անձանց ստացիոնար պայմաններում պատշաճ բժշկական օգնության հարցը քննարկելիս այլ հարցերի թվում Դատարանը հաշվի է առնում նաև դատապարտյալների համար նախատեսված հիվանդանոցներում ստացիոնար բուժում ստացող անձանց պատժախուց տեղափոխելու հանգամանքը՝

արձանագրելով Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում *(տե՛ս, ի թիվս այլ գործերի, Սախվածեն ընդդեմ Ռուսաստանի գործով 2012 թվականի հունվարի 10-ի վճիռը, գանգատ թիվ 15492/09, Բաժակսն ընդդեմ Լատվիայի գործով 2010 թվականի հոկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 71572/01)*:

ԽԿԿ իրավական դիրքորոշման համաձայն՝ *բուժանձնակազմը պետք է մեծ ուշադրություն դարձնի մեկուսի պահվող ազատությունից զրկված բոլոր անձանց: Բուժանձնակազմը պետք է տեղյակ լինի յուրաքանչյուր նման դեպքի մասին, մեկուսացումից անմիջապես հետո այցելի ազատությունից զրկված անձին, հետագայում պարբերաբար՝ օրական առնվազն մեկ անգամ, այցելի նրան, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում տրամադրի շտապ բուժօգնություն: Դրանով հանդերձ, բուժանձնակազմը պետք է ազատությունից զրկման վայրի վարչակազմին տեղեկացնի բոլոր այն դեպքերի մասին, երբ մեկուսի պահվելը լրջորեն սպառնում է ազատությունից զրկված անձի առողջությանը» (տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 21-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 2010 թվականի օգոստոսի 1-ից 2011 թվականի հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածը, կետ 63)*:

Համանման կարգավորումներ է պարունակում նաև ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշումը: Այս որոշման 225-րդ կետը սահմանում է, որ *կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետն* ***իրավունք ունի*** *հետաձգելու պատժախուց տեղափոխելու ձևով տույժի կիրառումը, կրճատելու պատժախցում գտնվելու ժամանակահատվածը կամ ժամկետից շուտ կալանավորված անձին կամ դատապարտյալին ազատելու տույժը կրելուց՝ հաշվի առնելով հիվանդության հետ կապված պատժախցում գտնվելու անթույլատրելիության վերաբերյալ բժշկի եզրակացությունը*:

Վերը շարադրվածը վկայում է այն մասին, որ պատժախուց տեղափոխելու ձևով կարգապահական տույժ կիրառելիս առանցքային պետք է լինի ազատությունից զրկված

անձի առողջության պահպանման իրավունքի ապահովումը: Ուստի, հիմնավոր է պնդումն առ այն, որ կարգապահական խախտում թույլ տված ազատությունից զրկված անձի նկատմամբ պատժախուց տեղափոխելու ձևով տույժը չի կարող կիրառվել, եթե անձը շարունակում է ստանալ ստացիոնար բուժում: Նման պարագայում կարգապահական տույժի կիրառումն անհրաժեշտ է հետաձգել մինչև ստացիոնար բուժման ավարտը՝ հետաձգումը դիտարկելով որպես պարտականություն, այլ ոչ հայեցողություն:

զ) Անդրադարձ կատարելով ցմահ ազատազրկված անձանց անջատ պահելու կանոնի վերանայմանը՝ հարկ է նշել, որ դեռևս 2010 թվականին Հայաստան կատարած այցի ընթացքում ԽԿԿ-ն նշել է, որ չի արդարացնում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պարբերաբար մեկուսացումը: Նման մոտեցումը չի համապատասխանում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003 թվականի հոկտեմբերի 9–ի «Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ցմահ ազատազրկման դատապարտված անձանց և երկարաժամկետ ազատազրկման դատապարտված այլ անձանց պատժի կրումը կազմակերպելու» վերաբերյալ (2003)23 հանձնարարականին: Վերջինիս կից ներկայացված զեկույցում նշվում է, որ *հաճախ սխալ ենթադրություն կա այն մասին, որ ցմահ ազատազրկումը ենթադրում է, որ քրեակատարողական հիմնարկում պահվող անձը վտանգավոր է: Ուստի, ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տեղավորելը պետք է լինի ոչ թե նրանց ազատազրկման, այլ ռիսկերի և կարիքների համապարփակ ու շարունակական գնահատման արդյունքը՝ հիմք ընդունելով անհատականացված պատիժը կրելու պլանը*: ԽԿԿ-ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին *վերանայել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց մեկուսացմանը վերաբերող օրենսդրությունն ու պրակտիկան՝ ելնելով նշված դիտարկումներից* (*տե՛ս ԽԿԿ-ի կողմից 2010 թվականի մայիսի 10-21 ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետություն կատարած այցի արդյունքների հիման վրա կազմված զեկույցը, կետ 74)*:

ԽԿԿ-ն Հայաստան կատարած իր զեկույցում նշել է, որ *ցմահ ազատազրկված դատապարտյալներն ավելի վտանգավոր չեն, քան մյուս դատապարտյալները,*

հետևաբար չպետք է առանձնացվեն միայն որպես կիրառված պատժատեսակի ինքնաբերաբար առաջացող արդյունք (principle of non-segregation) *(տե՛ս ԽԿԿ-ի կողմից 2013 թվականի ապրիլի 4-10 ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետություն կատարած այցի արդյունքների հիման վրա կազմված զեկույցը, կետ 73)*:

Հարկ է ընդգծել, որ միջազգայնորեն ճանաչված վերոնշյալ սկզբունքը նպաստում է ցմահ դատապարտված անձանց վերասոցիալականացման գործընթացի արդյունավետ իրականացմանը՝ այդպիսով ապահովելով պատժի նպատակների իրացումը:

Այսպիսով, ելնելով նշված իրավական վերլուծություններից՝ Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկում է Քրեակատարողական օրենսգրքի 69-րդ հոդվածում՝ որպես դատապարտյալին մեկ հիմնարկից նույն տեսակի մեկ այլ հիմնարկ տեղափոխելու հիմք, ի թիվս այլնի, դիտել նաև մերձավոր ազգականների հետ շփումներն ապահովելու նպատակը:

Առաջարկվում է նաև նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասում՝ դատապարտյալին անձնական բացառիկ հանգամանքներով կարճաժամկետ մեկնում տրամադրելը կախվածության մեջ չդնել առանձնապես վտանգավոր ռեցիդիվի կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքերի հետ: Միաժամանակ, անհրաժեշտ է առանց անձի անհատական ռիսկայնությունը հաշվի առնելու նման տարբերակված մոտեցումը բացառել նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ պարբերությունում:

Հաշվի առնելով կալանքի որպես խափանման միջոցի կիրառման այսօր Հայաստանում ձևավորված պրակտիկան *(ավելի մանրամասն տե՛ս 2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդման 165-169 էջեր)*, ինչպես նաև երկարատև տեսակցություններ տրամադրելու հարցում կալանավորված անձանց և դատապարտյալների միջև չարդարացված տարբերակված մոտեցումը՝ առաջարկվում է «Ձերբակալված և կալանավորված անձանց

պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածում նախատեսել կալանավորված անձանց երկարատև տեսակցություններ տրամադրելու հնարավորություն:

Անհրաժեշտ է նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասում երեխային մանկատանը կամ ազգականի մոտ տեղավորելու նպատակով դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրելու հնարավորությունը չկապել միայն հաշմանդամ կամ ուղղիչ հիմնարկին կից մանկատանը երեխա ունենալու հետ, այլ նշված նպատակով կարճաժամկետ մեկնում տրամադրել այն բոլոր դեպքերում, երբ դատապարտյալի երեխան հայտնվել է կյանքի դժվարին իրավիճակում:

Բացի այդ, առաջարկվում է դատապարտյալի՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով նույնականացման քարտ ստանալու իրավունքը և քրեակատարողական հիմնարկի վարչակազմի՝ քարտի տրամադրման գործընթացը կազմակերպելու պարտականությունը սահմանել ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտում՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքում: Այս նպատակով առաջարկվում է լրացում կատարել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասում՝ հղում կատարելով «Նույնականացման քարտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին: Միաժամանակ, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առաջարկվում է շտկել ձերբակալված անձանց կողմից քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու վերաբերյալ օրենքի մեջ առկա հակասությունը՝ ուժը կորցրած ճանաչելով նշված օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասը:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նման գործարքներ կնքելու համար օրենքով սահմանված դեպքերում անհրաժեշտ պայման է համարվում անձը հաստատող փաստաթղթի առկայությունը և այն, որ կալանավորված և ձերբակալված անձինք արդեն իսկ ունեն այդ քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու իրավունքը, առաջարկվում է, «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում փոփոխություն կատարելով, նույնականացման քարտ ստանալու իրավունք ամրագրել նաև կալանավորված անձանց համար: Միևնույն ժամանակ, առաջարկվում է

նշված անձանց՝ նույնականացման քարտ ստանալու իրավունքի և համապատասխան ազատազրկման հիմնարկի վարչակազմի կողմից այն ստանալու գործընթացի կազմակերպման վերաբերյալ ամրագրում կատարել նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

Վերը նշվածով պայմանավորված՝ առաջարկվում է փոփոխություն կատարել նաև «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում: Մասնավորապես, առաջարկվում է նախատեսել, որ օրենքով սահմանված հիմքերով քրեակատարողական հիմնարկի կամ ձերբակալվածներին պահելու վայրի վարչակազմի կողմից համապատասխանաբար, կալանավորված կամ ձերբակալված քաղաքացուց ժամանակավոր վկայականը կամ նույնականացման քարտը վերցնելու դեպքում նա, քաղաքացիաիրավական գործարքներ կնքելու անհրաժեշտությամբ պայմանավորված, հնարավորություն ունենա դիմելու համապատասխան ազատազրկման վայրի վարչակազմին՝ իր ժամանակավոր վկայականը կամ նույնականացման քարտը ստանալու խնդրանքով: Այս դեպքում համապատասխան ազատազրկման հիմնարկի վարչակազմը պարտավորություն կունենա ժամանակավոր վկայականը կամ նույնականացման քարտը տրամադրել ազատությունից զրկված տվյալ քաղաքացուն:

Առաջարկվում է նաև օրենսդրորեն ամրագրել կարգապահական խախտում թույլ տված ազատությունից զրկված անձի նկատմամբ պատժախուց տեղափոխելու ձևով տույժի միջոցի կիրառման հետաձգման հնարավորություն:

Ինչ վերաբերում է ցմահ ազատազրկման դատապարտված անձանց անջատ պահելու կանոնին, ապա առաջարկվում է Քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչել՝ այդպիսով բացառելով ցմահ ազատազրկման դատապարտված անձանց այլ դատապարտյալներից անջատ պահելու կանոնը:

Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումները

Իրականացված ուսումնասիրությունների հիման վրա ներկայացված առաջարկների ընդունմամբ՝

1) կապահովվի կալանավորված անձանց և դատապարտյալների մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունքի պատշաճ իրացումը: Այս առումով հարկ է ընդգծել, որ մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունքի հարգումը լուրջ խթան կհանդիսանա պատժի ենթարկված անձանց վերասոցիալականացման և պատժի նպատակներին հասնելու համար.

2) լրացուցիչ երաշխիքներ կնախատեսվեն նաև ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման ուղղությամբ.

3) ցմահ ազատազրկման դատապարտված անձանց մյուս դատապարտյալներից անջատ պահելու կանոնի վերացման հիմքով կբարձրացվի ցմահ ազատազրկման դատապարտված անձանց վերասոցիալականացման գործընթացի արդյունավետությունը.

4) կալանավորված ՀՀ քաղաքացիները իրավունք կունենան ազատազրկման վայրում գտնվելիս ստանալ նույնականացման քարտ, որը թույլ կտա նրանց իրականացնել քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու իրենց իրավունքը: Նշված անձանց՝ նույնականացման քարտ ստանալու իրավունքը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքում ազատազրկման վայրի վարչակազմի կողմից այն տրամադրելու կամ տրամադրումը կազմակերպելու պարտականությունը կամրագրվի ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտերում՝ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում և ՀՀ քրեակատարողական օրենսգրքում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ